Քաթրին Շեֆեր
հայաստանյան թիմի ղեկավար

«Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր

Դեռևս 2015 թ-ին Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգը, 915 համայնքներով հանդերձ, բավականին մասնատված էր, քանի որ էապես տարբերվում էր բնակչության թվաքանակով և կարողություններով: Բազմաթիվ համայնքներ չափազանց փոքր էին իրենց գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար, այսինքն՝ ունենալու բավարար եկամուտ, պահպանելու հանրային ենթակառուցվածքները, մատուցելու բնակչության կարիքները բավարարող հիմնական հանրային ծառայություններ և աջակցելու կայուն սոցիալական և տնտեսական զարգացմանը:

Ի պատասխան այս մարտահրավերների՝ ՀՀ կառավարությունը սկսեց լայնամասշտաբ կառուցվածքային փոփոխության գործընթաց: Վարչատարածքային բարեփոխումների հիմնական նպատակը տեղական ինքնակառավարման համար նպաստավոր շրջանակային պայմաններ և տեղական

մակարդակով կենսունակ կառույցներ ստեղծելն է, ինչը հնարավորություն կտա տեղական ինքնակառավարման մարմիններին դառնալու գործուն և պատասխանատու միավորներ:

Նախատեսվում է ստեղծել մեծությամբ կառավարելի վարչատարածքային միավորներ և այդպիսով նվազեցնել 900-ից ավելի համայնքների թիվը՝ հասցնելով այն մոտ 250-ի:

Բարեփոխումն ընկալվում է նաև որպես մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման համակարգի մի մաս, ինչպես նաև որպես ապակենտրոնացման ուղղությամբ կատարվող առաջին կարևոր քայլ:

«Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիրը, որն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ, և Հայաստանում համաֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից, խորհրդատվություն է տրամադրում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը (ՏԿԶՆ)՝ որպես բարեփոխումը նախագծող և իրականացնող մարմնի:

Ի լրումն, ԳՄՀԸ-ն հզորացնում է խոշորացված համայնքների կարողությունները՝ համապատասխանեցնելով հիմնական համակարգերը նոր պահանջներին, բարելավելով կառավարման և վերահսկողության առանցքային գործընթացները: Մենք աջակցում ենք համայնքային կառավարման արդիականացմանը և ծառայությունների մատուցման բարելավմանը էլեկտրոնային կառավարման նորարարական գործիքների ներդրման և քաղաքացիների սպասարկման գրասենյակների հիմնման միջոցով:

Որդեգրելով ծրագրային բյուջետավարման մոտեցումը՝ համայնքներն ավելի լավ են կարողանում կառավարել իրենց ծախսերը՝ ըստ արդյունքների, և տրամադրել բնակչությանը հեշտընկալելի տեղեկություններ: Արդյունքում, տեղական մակարդակում հանրային միջոցների օգտագործումը

դառնում է ավելի թափանցիկ և հաշվետու: Համայնքները նաև տեղական տնտեսական զարգացման հիմնաքարն են: Ընդլայնված պլանավորման հնարավորությունները թույլ են տալիս խոշորացված համայնքներին մշակելու իրատեսական տնտեսական զարգացման ռազմավարություններ և կազմելու նպատակային հայտեր տեղական ներդրումային ծրագրերի համար: Ծրագիրը նաև անդրադառնում է կանանց դերի բարձրացման անհրաժեշտությանը տեղական և տարածաշրջանային քաղաքականությունում՝ հզորացնելով կին քաղաքական գործիչների կարողությունները և խթանելով նրանց մասնակցությունը տեղական որոշումների կայացման գործընթացներում:

Այս գրքույկը կուղեկցի ձեզ դեպի Հայաստանի տարբեր մարզեր և կներկայացնի տեղական մակարդակում դրական զարգացումները:

«Տեսանելի ձեռքբերումներ՝ քայլ առ քայլ. պատումներ և հայացք Հայաստանի համայնքներից» խորագիրը ցույց է տալիս, որ շոշափելի արդյունքների հասնում են ոչ թե մեկ գիշերվա ընթացքում, այլ աստիճանաբար:

Հաջողությունները պայմանավորված են տարբեր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավվածությամբ և հանձնառությամբ, ազգային և տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ համագործակցությամբ և միջազգային գործընկեր կազմակերպությունների համատեղ ջանքերով:

Սույն աշխատությամբ արծարծվում են տեղական որոշումներ կայացնողների, համայնքապետարանների աշխատակազմերի մասնագետների և քաղաքացիների շրջանում արձանագրված հաջողության պատմությունները, նրանց տեսակետներն ու դիտարկումները՝ փոխանակելով իրենց փորձն ու կարծիքները, ներկայացնելով իրենց պատկերացումները բարեփոխումների շնորհիվ համայնքներում արձանագրված դրական երևույթների վերաբերյալ:

ԱԲՈՎՅԱՆ



Արուսյակ Առաքելյանը Աբովյան համայնքի աշխատակազմի քարտուղարն է և աշխատում է արդեն բավականին երկար տարիներ: Նա ակտիվորեն ներգրավված է համայնքային կառավարման գործում: Նրա խոսքով՝ կին ղեկավար լինելը հեշտ չէ, մեծ կամք ու պատրաստակամություն է պետք:

«Ընտանիքում երեք տղամարդ ունեմ, ովքեր առարկություն չեն ունեցել աշխատանքիս վերաբերյալ: Բոլոր դժվարությունները պատվով ենք հաղթահարում, նրանք միշտ իմ կողքին են ու ցանկացած հարցում օգնում են. հակառակ դեպքում գուցեև որևիցե հաջողության չհասնեի»:

ԳՄՀԸ-ի հետ համագործակցությունը կարևորում է թե՛ գործնական առումով, թե՛ անձնական, քանի որ համատեղ միջոցառումներից մեկի ընթացքում առիթ է ունեցել նոր գործնական և ընկերական մտերիմ կապեր ձեռք բերել այլ համայնքների ներկայացուցիչների հետ: Մինչ օրս էլ մտերիմ ընկերուհիներ են Մեղրիի աշխատակազմի ղեկավարի հետ:

20 տարվա համայնքային աշխատանքի փորձ՝ մի ամբողջ կյանք **Գոհար Մկրտչյանն** այս քաղաքում է ու այս աշխատանքով է զբաղվում, սակայն նա ողջունում է նոր աշխատաոճը և նոր մոտեցումները: Տիկին Մկրտչյանն այժմ **«մեկ պատուհան սկզբունքի»** համակարգողն է. հենց իրեն են առաջինը մոտենում ՔՍԳ այցելուները:

«Շատ եմ սիրում աշխատանքս և ուրախ եմ, որ վերջին փոփոխություններից հետո ավելացել է քաղաքացիների հետ անմիջական շփումը»:

ՀԿՏՀ-ի շնորհիվ Գոհար Մկրտչյանն այլևս չի թերթում դիմումների մատյանը, անհրաժեշտ փաստաթուղթը միանգամից գտնում է էլեկտրոնային տարբերակով: Իր գործն այժմ դարձել է ավելի հետաքրքիր, ավելի պատասխանատու:

Վեներա Ավագյանի այժմյան աշխատանքը, որն անմիջականորեն կապված է Աբովյանի բնակիչների հետ, կարծես, ավելի մոտ է դարձնում իրեն բնակիչներին ու համայնքին: 8-ամյա համայնքային աշխատանքի փորձում վերջին երկու տարիներն առանձնանում են: Իհարկե, սկզբնական շրջանում երբեք էլ հեշտ չէ փոփոխություններին հարմարվելը, բայց արդյունքն անգնահատելի է: Եվ նա գոհ է աշխատանքի նոր ձևաչափի ընձեռած հնարավորություններից:



ԱԼԱՎԵՐԴԻ



Սերյոժա պապն ապրում է Ալավերդու վերին հատվածում՝ Սարահարթ թաղամասում: Այս թաղամասը կտրված է համայնքից Դեբեդ գետով: Ձմռան ամիսներին այնտեղ հասնելը դառնում է իսկական պատմություն: Բայց միևնույնն է Սերյոժա պապը սիրում է այցելել նոր վերակառուցված ՔՍԳ: Ինչպես ինքն է ասում. «Ինչ հարց ունենում եմ, գալիս եմ մեր Ալավերդու «քաղսովետ» (ծիծաղում է) և շատ արագ ստանում եմ անհրաժեշտ ծառայությունը»: Հետագայում նախատեսվում է Ակներ և Սանահին գյուղական թաղամասերի դպրոցում հատկացնել մեկական սենյակ, որտեղ Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) ներդրման շնորհիվ հնարավոր կլինի կապ հաստատել Ալավերդու ՔՍԳ-ի հետ:

Ալավերդու 32-ամյա բնակիչ **Գուրգենը** սովորել է Երևանում, իսկ ավարտելուց հետո վերադարձել է Ալավերդի՝ իր հայրական տունը, և այստեղ էլ պլանավորում է շարունակել կյանքը: ՔՍԳ եկել էր հոր հետ, ակնկալում էին իրավաբանի խորհրդատվություն:

Համայնքապետարանի իրավաբան **Կարեն Կոնինյանը** պատմեց, որ նա աստիճանահարթակ է կառուցել իր բակում, ինչի արդյունքում նեղացել է ճանապարհը և հարևանների հետ վեճի պատճառ դարձել: Համայնքապետարանը վարչական վարույթ է հրավիրել և հանդիսացել միջնորդ մարմին բնակիչներին հաշտեցնելու հարցում: Արդյունքում հայր ու տղա լայնացրել են ճանապարհի հակառակ կողմի հատվածը և համայնքապետարանի միջնորդությամբ սկսել ինքնակամ կառույցի օրինականացման գործընթացը:



Գոհար Մաթևոսյանը 2008-ից աշխատում է և զբաղվում է ՔՍԳ-ի տեղական վճարներով, հարկերով և տուրքերով (քաղաքապետարանի հարկային բաժնում): «Նախկինում մեր բաժինը 4-րդ հարկում էր, և բնակչին դժվար էր լինում բարձրանալ: Իսկ այժմ ամեն ինչ ավելի հեշտ է դարձել: Գրասենյակը գտնվում է առաջին հարկում, և այստեղ տարբեր ոլորտի մասնագետներ են նստում»,- նշում է նա:

Քաղաքացիները մոտենում են տարբեր հարցերով՝ սկսած իրավաբանական ծառայություն ստանալու ակնկալիքից, վերջացրած անձնական հարցերով. «Բոլորին փորձում ենք օգնել»:

Կարինեն և իր ընկերուհի **Գրետան** իրավաբանական ծառայության հարցով էին եկել: Շատ հուզված էին, քանի որ լուրջ անձնական խնդրի առջև էին կանգնել: Գրասենյակի աշխատակից պարոն **Կոնինյանն** ասաց, որ այդ գործի լուծումը համայնքապետարանի գործառույթը չէ: Այնուամենայնիվ, նա փորձեց տրամադրել իրավախորհրդատվություն, որը կարող է օգտակար լինել հետագա վեճերի հարթման համար: Համայնքապետարանը կարող է տրամադրել իրավախորհրդատվություն, սակայն իրավասու չէ դիմել համապատասխան մարմիններին:

ԱՄԱՍԻԱ



Մարգար պապը 82 տարեկան է: Ծնվել ու ապրել է այստեղ, կյանքի շատ թունելներով է անցել, բայց Ամասիայի օդն ու բնությունն իր համար ամեն ինչ արժեն. հետ է եկել ցանկացած դեպքում: Նա տեսել է խորհրդային ժամանակների և՛ լավ, և՛ վատ կողմերը, նա տնկել է այս պուրակի ծառերի մի մասը, որոնց շվաքի տակ նստած էլ պատմում է՝ սկսած պուրակի կենտրոնից Լենինի արձանի ապամոնտաժումից մինչև վերջին քաղաքական դեպքերն ու իր մոտեցումը դրանց:

Համայնքների խոշորացմանը մինչ օրս դեմ է, բայց նպատակները հասկանում է, առավելություններից էլ շեշտում, որ ճանապարհները բաց են ու նորոգվում են, իսկ փողոցային լուսավորությունը դարձել է մշտական:

Տիկին **Ջեմմա Հարությունյանը** 2016 թվականի հոկտեմբերից աշխատում է համայանքապետի պաշտոնում: Նշում է, որ իր աշխատանքը շատ պատասխանատու է և հագեցած. իր ամուսինը և ընտանիքը շատ են օգնում: Լինել կին և ղեկավարել, այն էլ այնպիսի համայնքում, որն իրենից առաջ միայն տղամարդ ղեկավարներ է ունեցել, շատ դժվար է: Նա ամեն օր քննարկումներ է անցկացնում իր խորհրդականների հետ և փորձում հնարավորինս հաճախ լինել տարբեր բնակավայրերում և զրուցել բնակիչների հետ: Նա վստահ է, որ այսկերպ ավելի հեշտ կհասկանա և կլուծի բնակիչներին հուզող խնդիրները:

Նարեկը 7 տարեկան է: Արդեն երկրորդ տարին է՝ քրոջ հետ միասին հաճախում են Ամասիայում գործող հմտությունների զարգացման ակումբ և արվեստի խմբակ: «Արդյո՞ք փոքր չէ դուդուկ նվագելու համար» հարցին պատասխանեց, որ Ջիվան Գասպարյանը 6 տարեկանից է սկսել նվագել: Նա հավատում է, որ գալու է մի օր, երբ ինքը հայկական դուդուկի ելևէջները ներկայացնելու է համայն աշխարհին: Նա իսկապես հավատում է. աչքերի մեջ հպարտություն է վառվում ամեն անգամ, երբ իր վարպետի կողմից արժանանում է գովասանքի խոսքերի:

Ամասիայի համայնքապետարանի առաջին հարկում նախկինում եղել է ճաշարան. երկար տարիներ չի գործել, դռները փակ, իսկ ներսում՝ փլատակներ: Այսօր ԳՄՀԸ, ԱՄՆ ՄԶԳ և ՇԶՀԳ ջանքերով իրականացվել է վերանորոգում և տեխնիկական վերազինում, բացվել է ՔՍԳ: Համայնքապետ **Ջեմմա Հարությունյանը** նշում է, որ ՔՍԳ-ն և ՀԿՏՀ-ն, որով աշխատում են նախապես վերապատրաստում անցած օպերատորները, զգալիորեն հեշտացրել է բնակիչների գործը: ՔՍԳ-ում աշխատում է չորս օպերատոր, երեքը՝ կին, մեկը՝ տղամարդ:

ԱՇՏԱՐԱԿ

«Հիշում եմ, երբ փոքր ժամանակ մայրիկիս հետ գալիս էինք քաղաքապետարան, գնում էինք կաբինետից կաբինետ, ինձ մոտ տպավորվել էր՝ որպես շատ հոգնեցնող ու ձանձրալի գործընթաց»,- մտաբերում է Աշտարակի քաղաքային համայնք Քաղաքացիների սպասարկման գրասենյակի (ՔՍԳ) աշխատակից **Սոնա Ազատյանը:** «Հիմա ամեն ինչ մեկ վայրում է, բացի այդ՝ հարմարավետ է ու գեղեցիկ»,- ավելացնում է նա:

Աշտարակի համայնքապետի տեղակալ **Գևորգ Եղիազարյանը** հսկայական պատասխանատվությամբ է մոտենում իր գործին: Նա տեղեկացված է ամեն ինչից և նորամուծությունները ընդունում է գրկաբաց, գտնում առավելությունները և կիրառում դրանք հօգուտ բնակիչների: Խորհրդի համար հենց նրան են դիմում աշխատակիցները, ինչու ոչ՝ նաև բնակիչները, ովքեր լցված են վստահությամբ համայնքապետարանի նկատմամբ, քանի որ տեսնում են բարեփոխումները:

«Քիչ գումարով մեծ արդյունք ստանալու համար պիտի կարողանաս այդ միջոցները ճիշտ պլանավորել: ԳՄՀԸ կողմից արդյունքահեն բյուջետավարման ծրագրի ներդրման շնորհիվ մենք այժմ համայնքի բյուջեն պլանավորում ենք՝ ունենալով հստակ տեսլական, իսկ արդյունքը գնահատում ենք և՛ քանակական, և՛ որակական ցուցանիշներով»,- նշում է պարոն Եղիազարյանը:

Նորաբաց ՔՍԳ-ն դրական լիցքեր է փոխանցում ցանկացած բնակչի: Նրանք, կարևորելով մարդկային շփման բարձր մակարդակը և սրտացավ մոտեցումը, ավելի հաճախ են ցանկանում գալ՝ երբեմն, գուցե, առանց խիստ անհրաժեշտության: «Բնակիչները ճանաչում են իրենց սպասարկող աշխատակիցներին, վստահում այնպես, ինչպես կվստահեին սեփական բարեկամին կամ հարևանին»,- նշում է հողի գույքահարկը վճարող կինը:

Հռիփսիմե Մեծիկյանը, ով Աշտարակի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետն է, շատ է կարևորում սպասարկման մշակույթի բարելավումը: ՔՍԳ-ն փոխել է և շարունակում է փոխել թե՛ քաղաքացիների, թե՛ աշխատակիցների հաղորդակցման մշակույթը՝ էթիկայի տեսանկյունից. «Եթե նախկինում ցանկացած բաժնի մոտ հաճախ աղմուկ էր, հիմա փորձում են ցածր խոսել: Սենյակում 10 աշխատակից կա, գումարած այցելուները. անկախ քեզանից, փորձում ես ավելի հանգիստ հաղորդակցվել դիմացինի հետ»:

Տաթև Դատումյանն ամեն օր դիմավորում և ճանապարհում է տասնյակ քաղաքացիների: Հենց նա է ուղղորդում ցանկացած խնդրով ՔՍԳ եկած քաղաքացուն համապատասխան մասնագետի մոտ: Նա ծնվել է և սովորել Երևանում, սակայն ամուսնությունից հետո տեղափոխվել է Աշտարակ: «Շատ է հեշտացել գործընթացը՝ թե՛ ժամանակի, թե՛ արդյունքի տեսանկյուից: Քաղաքացուն անմիջապես տրամադրում եմ իր դիմումի համարը, որով ինքը տանից էլ կարող է հետևել դիմումի ընթացքին»,- նշում է Տաթևը:

ԱՐՍԱՑԱՍ



Տիկին **Ռոզան** Արտաշատի Քաղաքացիների սպասարկման գրասենյակի ամենատարեց այցելուն է՝ 94 տարեկան: Որպես կանոն, այս տարիքում տանից հազվադեպ են դուրս գալիս, սակայն տիկին Ռոզան պահպանում է նույն աշխուժությունը, ինչն արդեն դարձել է իր կենսաձևը: Արտաշատի ՔՍԳ-ում բոլորը իրեն գիտեն ու չափազանց սիրալիր են:

«ՀԿՏՀ-ի շնորհիվ շատ է հեշտացել թե՛ քաղաքացիների, թե՛ իրավաբանական անձանց տվյալների հետ աշխատանքը»,- նշում է ՔՍԳ-ի աշխատակից **Նարինե Մաթևոսյանը**: Նախկինում ամեն ինչ թղթային էր, ժամանակզ և ռեսուրս էր խլում թե՛ աշխատակիցներից, թե՛ առավել ևս բնակչից: «Հաճախ մարդիկ առողջական խնդիրներ ունեն կամ այլ պատճառներով չեն կարողանում հարկից հարկ բարձրանալ: ՔՍԳ-ն հսկայական փոփոխություն է նրանց համար»,- ասում է նա:



«Իմ աշխատանքը հիմնականում կապված է համայնքի բնակիչների հողատարածքներն այցելելու հետ, սովորաբար գարնանը և աշնանը»,- ասում է **Գեղամ Արշակյանը**: Նրա գործը հիմնականում վերաբերում է քարտեզագրմանը: Աշխատանքի առավել արդյունավետ բաշխման համար ՔՍԳ-ի աշխատակիցներով փոխարինում են միմյանց՝ այդ կերպ մշտապես տեղյակ լինելով քաղաքացիների դիմումներից:

Նարինե Ավետիսյանը համակարգում է ՔՍԳ-ի աշխատանքները և պատասխանատու է համայնքապետարանի կայքի համար: «Հատուկ մոտեցում ենք փորձում ցուցաբերել նույնիսկ ամենապահանջկոտ քաղաքացիներին»,- ասում է նա: Նրա խոսքով՝ ԳՄՀԸ հետ համագործակցությունը նպաստել է ավելի կառուցողական հարաբերությունների ձևավորմանը համայնքապետարանի աշխատակազմի և քաղաքացիների միջև: Բացի այդ, բարելավվել է նաև համագործակցությունը համայնքների միջև: «Այս ամենի արդյունքում մեր համայնքապետարանն ավելի արդյունավետ և թափանցիկ է գործում»,- ասում է նա:

Արտաշատի բնակիչ **Արայիկը** գտնում է, որ ՔՍԳ-ները նոր մակարդակ և աշխատաոճ են թելադրում և դա շատ լավ է, քանի որ ամեն ինչ դարձել է ավելի թափանցիկ և առավելագույնս դյուրին: Նրա խոսքերով՝ ՔՍԳ այցելելը և պրոֆեսիոնալ ու բանիմաց մասնագետների հետ շփվելը միայն հաճույք է:

Լալա Դավթյանը երկար ժամանակ է՝ աշխատում է Արտաշատի համայնքապետարանում, իսկ երբ 2016 թ-ին Քաղաքացիների սպասարկման գրասենյակը, տեղափոխվեց այստեղ: Արտաշատը բավականին մեծ ու աշխույժ քաղաք է, ինչը ենթադրում է շատ աշխատանք՝ տարբեր ուղղություններով: Բայց դա տիկին Լալային դուր է գալիս. յուրաքանչյուր օրը, աշխատանքը կատարելագործելու նոր հնարավորություն է:

ԱՐՓԻ



Այստեղ գրեթե երբեք շատ աղմկոտ չի լինում, միայն վաղ առավոտյան կաթ հավաքող մեքենայի ձայները, որին հաջորդում է ջուր տանելու գործընթացն ու իրարանցումը. որոշ տներում մինչ այժմ ջուր չի մատակարարվում: Արփի համայնքի փոքրիկ բնակչին դա որևէ կերպ չի խանգարում. տատիկին օգնելն ու ջուր հավաքելը, ինչպես ինքն է նշում, հաճախ խաղի է վերածում՝ ո՞վ ավելի շուտ կտանի և շատ: Իհարկե միշտ հաղթում է. խոստովանում է՝ խորամանկ ժպտալով:

Առանց մշտական ջրի ու վատ ճանապարհներով, բայց նրանք հավատում են, որ ամեն ինչ գնում է դեպի լավը, ինչի վառ վկայությունն են խոշորացման արդյունքում արված վերջին բարեփոխումները:

Վարչատարածքային բարեփոխումից հետո բացվել է նոր հաստիք՝ մեխանիզատորի, և այդ գործը ստանձնել է Արփի համայնքի բնակիչ **Աղասին**, ով ժամանակին եղել է ժողովրդական երգերի կատարող: Ասում է, որ իր կյանքը երգն էր և ուրիշ ոչինչ: Կպատկերացնե՞ր արդյոք, որ մի օր լինելու է մեխանիզատոր՝ հեռու արվեստից ու երգեցողությունից: Ո՛չ, բայց կյանքը հենց նրանով է գեղեցիկ, որ անկանխատեսելի է: Երջանկությունն այժմ նա գտնում է իր հոր պես մեծ աչքեր ունեցող ու տաղանդավոր երեխաների մեջ: Իր երեխաներին սովորեցրել է ամենակարևորը, որ պետք է սիրել այն բնակավայրը, որտեղ ապրում ես, սիրել աշխատանքն ու հավատալ ապագային:

Տիկին **Նաիրա Աբրահամյանը** 13 տարի է, ինչ ներգրավված է համայնքային աշխատանքներում և իրականացնում է ավագանու գործառույթները: Նա ապրում է Գառնառիճում: Ասում է, որ գիտի բոլորին՝ թե՛ ավագանու անդամներին, և թե՛ հասարակ գյուղացիներին, ով է ազնիվ, իսկ ով շահամոլ, ով է փորձում սայլը տեղից շարժել, իսկ ով հարմարվել է ու կարծրացել: Արդեն երկար տարիներ է՝ Գառնառիճի դպրոցի տնօրենն է: Բոլոր աշակերտներին դեմքով ճանաչում է ու հարմար պահին չի խուսափում խրատելով ասել, որ պետք է սրտացավ լինել սեփական բնակավայրի ու բնության նկատմամբ: Նշում է, որ ի սկզբանե դեմ է եղել վարչատարածքային բարեփոխումներին, սակայն ստացված արդյունքն արդեն ակնհայտ է և դրական:

Այս սենյակը խորհրդային տարիներին եղել էր ժողովների համար նախատեսված սրահ: Այն կրում էր այդ ժամանակների դրոշմը և այդ տարիներից ի վեր ոչինչ չէր փոխվել: Այժմ ԱՄՆ ՄԶԳ և ՇԶՀԳ աջակցությամբ այս սենյակը վերանորոգվել է, և այստեղ բացվել է Քաղաքացիների սպասարկման գրասենյակ: Ինչպես նշում է համայնքապետարանի աշխատակիցը, նրանց համար այս փոփոխությունը միայն սենյակի փոփոխություն չէ, այն խորհրդանշում է նոր ժամանակների սկիզբ:

ԴԻԼԻՋԱՆ



Դիլիջանի ՔՍԳ-ն ԳՄՀԸ-ի կողմից հիմնված և Հայաստանում գործող առաջին ՔՍԳ-ներից է: Այն հիմնվել է 2008 թ-ին: Գրեթե բոլոր աշխատակիցներն այստեղ են բացման իսկ օրվանից: Այսքան տարիների ընթացքում ընտելացել են բոլորը մեկ վայրում աշխատելու գաղափարին, և դա, իրենց խոսքերով, շատ դրական է. մեկը մյուսին օգնում են, իսկ աշխատանքային օրը ձանձրալի չի անցնում:

Դիլիջանի Քաղաքացիների սպասարկման գրասենյակի աշխատակիցները նշում են, որ խնդիրներ կամ բողոքներ բնակիչների կողմից հազվադեպ են լինում, քանի որ նրանք վաստակել են ամենակարևորը՝ բնակիչների վստահությունը, և կատակով հավելում են, որ դիլիջանցիները շատ խաղաղ ժողովուրդ են:

Տարիների ընթացքում կուտակած փորձը ներառում է նաև զվարճալի դեպքեր: Օրինակ՝ մի քանի տարի առաջ մի տարեց մարդ այցելեց ՔՍԳ՝ բողոքելու, որ 99 տարով կնքված վարձակալության պայմանագրի ժամկետները շատ կարճ են: Երկար քննարկումներից հետո ՔՍԳ իրավաբանը հանգստացրել է տղամարդուն՝ ասելով. «հենց ժամկետը լրանա, կգաս, ես անձամբ կերկարացնեմ»:



Սոնա Եգանյանը Դիլիջանի համայնքապետարանում է աշխատում 1986 թ-ից, իսկ 2009-ի փետրվարից ՔՍԳ-ում գործավար է: Նրա հիմնական գործառույթները ներառում են ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների, աշխատակազմի ղեկավարի հրամանների, ինչպես նաև դիմումների, գրությունների և տեղեկանքների մուտքագրումը համակարգ:

Ներքին վիճակագրությունը ցույց է տալիս, որ ՔՍԳ հիմնականում այցելում են մեքենայի գույքահարկի և ամառանոցների սեփականության հարկի վճարման համար: Վերջինիս պարագայում ամենամեծ շարժը գրանցվում է աշնանը:

ԹՈՒՄԱՆՅԱՆ



Ժորա պապը Թումանյան համայնքի վաղեմի բնակիչներից է: Խոշորացմանն ի սկզբանե վերաբերվել է վերապահումով, բայց երբ գործընթացն արդեն սկսվեց և նա փաստացի տեսավ արդյունքը, վերաբերմունքը փոխեց դեպի դրականը: Խոշորացման արդյունքում այստեղ վերանորոգվել է գիշերային լուսավորությունը: Հատկապես ամառվա ամիսներին, երբ գյուղատնտեսական գործերը շատ են, նա կարող է ավելի շատ ժամանակ տրամադրել իր այգու խնամքին: Թումանյանի ամենահին սև թթի ծառերն աճում են հենց իր բակում:

Ժորայի համար Քաղաքացիների սպասարկման գրասենյակի բացումը շատ դրական է: Այժմ բոլոր գործընթացները կատարվում են մի քանի անգամ արագ: Ինչ վերաբերում է տեղակայմանը, ոչինչ չի փոխվել: Համայնքապետարանը գտնվում է հենց տան մոտ՝ 20 մետր հեռավորության վրա, ուստի այստեղ նա գալիս է հենց տան հագուստով, առանց երկար պատրաստվելու, աշխատակիցներն էլ նրան լավ են ճանաչում ու փորձում ամեն ինչով օգնել: Այս անգամ նա եկել էր՝ հողի հարկը վճարելու:

Թումանյանի 68-ամյա բնակիչ **Լևոնին** համայնքում ճանաչում են որպես **Քեռի**, հավանաբար, իր բարյացկամ ու հանդարտ բնավորության համար: Նա բնակվում է Թումանյանի համայնքապետարանի հարևանությամբ և այցելում է ՔՍԳ՝ հիմնականում հարկերը վճարելու:

Թումանյան համայնքում խոշորացումից հետո ակտիվորեն սկսել են իրականացվել բարեփոխման աշխատանքեր: Մարցի ճանապարհին գտնվող մեքենաների կայանատեղում շինարարական աշխատանքներ են ընթանում: Համայնքին նախատեսվում է հատկացնել աղբատար, 2 մարդատար երթուղային, կոմբայն և այլն: Որպես կայանատեղի ընտրվել է ճանապարհի այս հատվածը, քանի որ այն կապող օղակ է համայնքի մյուս բնակավայրերի, կենտրոնի և մարզկենտրոնի հետ: Այս ամենի արդյունքում շինարարի աշխատատեղեր են բացվել, ինչը դրական է անդրադառնում համայնքի բնակիչների կյանքի որակի վրա:

Սուսաննա Վարդանյանն Մարցի ՀԿՏՀ օպերատորն է: Այն հարցին թե ինչպես է փոխվել իր աշխատանքային առօրյան խոշորացումից հետո, պատասխանում է, որ հիմա աշխատելով ՀԿՏՀ-ով, ունի ավելի շատ ինֆորմացիա, ճանաչում է գրեթե բոլոր բնակիչներին: Իր լիազորությունները շատացել են, աշխատանքը՝ հետաքրքրացել:



Համայնքապետի տեղակալ **Երվանդ Շաքարյանը** հաշվապահի հետ ներկայացնում է ներհամայնքային ճանապարհների վերանորոգման աշխատանքներն ու միջհամայնքային կանգառների կառուցման գծանկարները: Համաձայն նախագծման աշխատանքների՝ Թումանյանում բացվելու է եվրոպական չափանիշներին համապատասխանող կանգառ-շուկա, որը կունենա անհրաժեշտ բոլոր հարմարությունները: Այս մտքով ոգևորված է ոչ միայն ինքը, այլև համայնքապետը: Թումանյանը համայնքի կենտրոնն է, ուստի նման կանգառ-շուկան հարմարավետ կլինի բոլոր բնակավայրերի բնակիչների համար:

ՏԱԹԵՎ
ՀԱՄԱՅՆՔ



Երևան-Գորիս մայրուղուց ոչ հեռու՝ Սյունիքի **Շինուհայր** բնակավայրում, հսկայական մի գործարան է, որտեղ խորհրդային տարիներին կոշիկներ են արտադրվել: Գորիսի կանանց զարգացման **«Ռեսուրս կենտրոն»** հիմնադրամի ջանքերով շենքի մի մասը վերակառուցվել և ծառայում է որպես նորարարական արհեստագործական նախաձեռնություն:

Հիմնադրամի **«Goris Crochet»** և **«Wool to Carpet»** նախագծերի շրջանակներում մոտ 100 աշխատատեղ է ստեղծվել ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կանանց համար: Այս կանայք պատրաստում են ձեռագործ խաղալիքներ, դրամապանակներ, պայուսակներ, գուլպաներ, տեղական բրդից բարձեր և վերմակներ: Հենց կանանց տնտեսական կարողությունները զարգացնելու շնորհիվ է, որ նրանք սկսում են հետաքրքրվել համայնքային կյանքով և փորձում զբաղվել սոցիալական խնդիրների համատեղ լուծմամբ:

Բրդի արտադրամասից մոտ հարյուր մետր հեռավորության վրա 2015 թ-ին հիմնվել է Քաղաքացիների սպասարկման գրասենյակը, որը համայնքային կառավարման գործընթացներն արդիականացնելու շնորհիվ քաղաքացիներին առավել արդյունավետ ծառայություններ մատուցելու նպատակ ունի: Տաթև համայնքն առաջիններից էր, որ խոշորացավ վարչատարածքային բարեփոխումների արդյունքում:

Հիմա կանանց՝ հատկապես արտադրամասում աշխատողների համար, ավելի հեշտ է դարձել գրասենյակ գնալն ու անրաժեշտ ծառայություններ ստանալը: «Սյունիքն ավանդական մարզ է, և նախկինում մենք համայնքապետարան չէինք գնա խնդիրների լուծում ստանալու համար, իսկ հիմա մեզ շատ հարմար է ՔՍԳ գնալը: Գրասենյակը լուսավոր է, բաց, և այնտեղ շատ ընկերական մթնոլորտ է տիրում: Մենք այլևս ստիպված չենք համայնքապետարանի մութ միջանցքներով այս ու այն կողմ գնալ»,- ասում են նրանք:

Տաթև համայնքի ակտիվ քաղաքացի **Գառնիկը** նշում է, որ վերջերս փոխել է իր կարծիքը վարչատարածքային բարեփոխումների վերաբերյալ: «Գյուղի մասշտաբով տարբեր համայնքային ծառայություններ են բարելավվել: Շատ բաներ կարող եմ թվարկել, բայց կլինեմ կոնկրետ. գիշերային լուսավորության, աղբահանության, աշխատատեղերի ստեղծման և մի շարք այլ խնդիրներ են լուծվել խոշորացումից հետո,- ասում է նա,- բացի այդ ավելի հարմար է դարձել վարչական ծառայություններ ստանալը: Չնայած որ ես ապրում եմ Հալիձոր բնակավայրում և այնտեղ էլ կարող եմ ստանալ ցանկացած վարչական ծառայություն, այսօր պետք է գայի Շինուհայր և հենց այստեղ էլ՝ ՔՍԳ-ում, վճարում եմ իմ հարկերը»:

ՈՒՐՑԱՁՈՐ



«Ինչ սկսել եմ երեխաներին տեղափոխել, օրս այնքան դրական ու ուրախ է սկսվում երեխաների հետ... բոլորը կերազեին ամեն օրն իմ պես սկսել: Ծնողները հավաքվում են ճանապարհին՝ դիմավորելու իրենց երեխաներին, բայց երբ անձրև է լինում, հասցնում եմ հենց տան դիմաց, որ չմրսեն. բոլորին արդեն անունով գիտեմ...»,- պատմում է վարորդ **Գրիգորը**: Նա երկար տարիներ աշխատել է որպես ավտոմեխանիկ: Խոշորացման արդյունքում վարորդի հաստիք է բացվել: Շաղափի մանկապարտեզը երկար տարիներ չի գործում, ուստի նա երեխաներին ամեն օր հասցնում է Շաղափից դեպի համայնքի կենտրոն Ուրցաձոր և հակառակը:

Ուրցաձոր համայնքի ղեկավար **Ռաֆիկ Անդրեասյանը**, խոշորացումը դրական է գնահատում: Այժմ այն հեռավոր ու փոքր գյուղերը, որոնք իրենց բյուջեով ոչինչ անել չէին կարող, միավորվել են և կկարողանան իրականացնել համապատասխան ծրագրեր: Նա հավատում է այդ փոփոխություններին ու հաշվի է առնում բոլորի կարծիքը հանրային քննարկումներ անցկացնելու միջոցով: Անգամ դպրոցում հանձնարարել է, որ աշակերտները գրեն շարադրություն «Ի՞նչ կանեի ես, եթե լինեի համայնքապետ» թեմայով: Նա հավատում է, որ երեխաները վաղվա ապագան կերտողներն են, և մանկուց պետք է նրանց մեջ դաստիարակել քննադատական միտք:

Համայնքի ամենատարեց բնակիչներից մեկը **Ժենյա** տատիկն է, ով սովորության համաձայն՝ ուրց է հավաքում: Այս բուժիչ խոտաբույսը համարվում է համանուն համայնքի՝ **Ուրց**աձորի խորհրդանիշը: Ժենյա տատը գիտի ժողովրդական դեղերի բոլոր բաղադրատոմսերը. նրան շատերն են դիմում, իսկ ինքը փորձում է իր իմացությունները փոխանցել նոր սերունդներին:

Ծրագրի մասին

«Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիրն աջակցում է տեղական ինքնակառավարման մարմիններին՝ կատարելագործելու իրենց գործառույթների իրականացումը լավ կառավարման սկզբունքներին համապատասխան: Ծրագրի նպատակներն են համայնքային կառավարման գործընթացների արդիականացումը, հանրային միջոցների թափանցիկ և հաշվետվողական օգտագործումը, տարածաշրջանային և տեղական զարգացումը, ինպես նաև գիտելիքի փոխանակման և լավ տեղական ինքնակառավարման վերաբերյալ համատեղ ուսումնառության խթանումը տարածաշրջանի երկրների միջև:

Ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության (ՏԿԶՆ) հետ համատեղ: Հայաստանում ծրագիրը համաֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից:

Հրատարակության մեջ առկա տեսակետները չեն արտացոլում ԳՄՀԸ, ՇԶՀԳ, ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

Հրատարակված է
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից

Ընկերության կենտրոնական գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

«Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր
Բաղրամյան 4/1,
Երևան, Հայաստան, 0019

Պատասխանատու՝ ***Քաթրին Շեֆեր***
Բովանդակությունն ու համակարգումը՝ ***Լիկա Մկրտչյանի***
Հայեցակարգը՝ ***ՄԱՐՕԳ ԿՐԵԱՏԻՎ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ***
Լուսանկարները՝ ***Տաթև Մնացականյանի և Դոմինո Պրոդաքշնի***

2018 թ.
© GIZ